ՀՀ կրթության և գիտության նախարարություն

«Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամ

# ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

**Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և «Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամի միջև**

ք. Երևան 08 հուլիսի 2016 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ «Նախարարություն»)՝ որպես գործադիր իշխանության հանրապետական մարմին, որը մշակում և իրականացնում է կրթության և գիտության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը, և «Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամը (այսուհետ՝ «Ակադեմիա»)՝ որպես ավանդական մշակույթի պահպանման, գիտական հետազոտության, հանրայնացման, կրթական ծրագրերի մշակման և պարուսուցման ոլորտի համակարգված գործունեությամբ զբաղվող համալիր կառույց (երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր»),

**կարևորելով** ավանդական երգերի և պարերի հավաքման, ուսումնասիրման, ուսուցման, բեմական ներկայացման և հանրայնացման միջոցով դրանք կենցաղ վերադարձնելու հանգամանքը,

**խթանելով** ազգային ինքնագիտակցության զարգացումը և ազգային ինքնության գիտակցության խորացումը,

**գիտակցելով**, որ կրթական ոլորտում համագործակցությունը միանշանակ փոխշահավետ է և հանրօգուտ,

**նպատակ ունենալով** սովորողների շրջանում ամրապնդելու ազգային ոգին, գաղափարն ու ինքնությունը,

**ընդունելով** այդ նպատակի իրականացման գործում իր ներդրումն ունենալու՝ Ակադեմիայի ստանձնած պատրաստակամությունը,

**ղեկավարվելով** ՀՀ Կրթության և գիտության նախարարի2015 թվականի սեպտեմբերի 3-ի N 760-Ա/Ք և 2015 թվականի օգոստոսի 8-ի N 829-Ա/Ք հրամաններով, կնքեցին սույն փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ «Հուշագիր») հետևյալի շուրջ.

## 1. Հուշագրի առարկան

1.1 Հուշագրով Կողմերը պարտավորվում են.

1.1.1 Համագործակցել ավանդական մշակույթի պահպանման շրջանակներում,

1.1.2 Օժանդակել և աջակցել ազգային ինքնագիտակցության զարգացման և խթանման գործում,

1.1.3 Նպաստել հասարակության մեջ ազգային երգ ու պարի հանրայնացմանը,

1.1.4 Նպաստել ազգային մշակույթի պահպանմանը:

## 2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

**2.1 Նախարարությունը պարտավորվում է.**

2.1.1 Իր իրավասության սահմաններում Ակադեմիային տրամադրել Հուշագրով ամրագրված նպատակների իրագործման համար անհրաժեշտ համապատասխան թույլտվություններ /լիցենզիաներ/՝ ծրագրեր իրականացնելու համար,

2.1.2 Ակադեմիային տրամադրել Հուշագրով նախատեսված նպատակների իրագործման համար անհրաժեշտ տեղեկատվություն,

2.1.3 Գիտական կենտրոնի ստեղծման նպատակով աջակցել Ակադեմիային օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան տարածք տրամադրելուն,

2.1.4 Ազգային երգ ու պարի ոլորտի զարգացման, ուսումնասիրությունների անցկացման, դասավանդման, կրթական ծրագրերի մշակման և որակավորման համակարգման հարցերում դիտարկել Ակադեմիան որպես ոլորտում մասնագիտացած հիմնադրամ:

2.1.5 Նախարարության իրավասության շրջանակներում նպաստել և օժանդակել Ակադեմիային հետևյալ հարցերում□

ա. Ակադեմիայի ազգագրության գիտական կենտրոնի ստեղծում,

բ. ազգային երգ ու պարի արխիվի ստեղծում և թվայնացում,

գ. ռազմապարի ներդնում ՀՀ զինված ուժերում

դ. Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում ազգային երգ ու պարի առարկայի ներդնում,

ե. Ազգային երգ ու պարի ուղղվածություն ունեցող մագիստրատուրայի ստեղծում:

**2.2 Ակադեմիան պարտավորվում է.**

2.2.1 Պատրաստել, մշակել ազգային երգ ու պարի ոլորտի առարկայական ծրագրերը,

2.2.2 Ապահովել ազգային երգ ու պարի վերաբերյալ իր մոտ առկա տեղեկատվության փոխանակում և համատեղ գործունեություն Նախարարության հետ,

2.2.3 Իրականացնել ավանդական մշակույթի պահպանման, գիտական հետազոտության, հանրայնացման, կրթական ծրագրերի մշակման համար նախատեսված ծրագրեր

2.2.4 Օժանդակել նյութերի, տեսավիզուալ պարուսույցի, վերապատրաստման ձեռնարկների ստեղծման հարցերում (այդ թվում նաև էլեկտրոնային),

2.2.5 Ստեղծել ազգային երգ ու պարի արխիվ և թվայնացնել այն,

2.2.6 Ավարտին հասցնել պարերի գրառման «Կաքավագիր»՝ պարերի գրառման համակարգի մշակումը:

## 3. Եզրափակիչ դրույթներ

3.1 Կողմերը հանդիսանում են անկախ, իրենց գործունեությունն կազմակերպում են ինքնուրույն և Հուշագիրը չի կարող սահմանափակել այդ ինքնուրույնությունը, այն կրում է դեկլարատիվ բնույթ :

3.2 Կողմերը համաձայն են իրականացնել նաև այլ փոխաջակցություն ու համագործակցություն, որոնք բխում են սույն Հուշագրում հռչակված սկզբունքներից և չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Կողմերի ներքին կանոնակարգերին ու որոշումներին:

3.3 Հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ լրացուցիչ գրավոր համաձայնագիր կազմելու միջոցով:

3.4 Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

3.5 Հուշագիրը կարող է լուծվել ցանկացած պահի Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ այդ մասին առնվազն մեկ ամիս առաջ գրավոր տեղեկացնելով մյուս Կողմին:

3.6 Հուշագրի կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.7 Հուշագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

3.8 Հուշագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Հուշագրի մեկական օրինակ:

## 4. Կողմերի վավերապայմանները

| **ՀՀ կրթության և գիտության նախարարություն** | **«Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամ** |
|---|---|
| ՀՀ, ք. Երևան, 0010, Գլխավոր պողոտա, Կառավարական տուն 3 | ՀՀ, ք. Երևան, 0009, Կորյունի 19ա |
| | ՀՎՀՀ՝ 02642671 |
| ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ | Գործադիր տնօրենի ժպ |
| **Մանուկ Մկրտչյան** | **Դավիթ Սահակյան** |
| ստորագրություն | Ստորագրություն |
| Կ.Տ. | Կ.Տ. |